Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գողհովիտ գյուղի Ալ. Մյասնիկյանի անվան N1 միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (7 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար։

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկարէ 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} –ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի։

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին, Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի Ալ. Մյասնիկյանի անվան N1 միջնակարգ դպրոցում։

Տեղեկությունների համար զանգահարել 093086160 և 094540080 հեռախոսահամարներով։